

քիչ մը ականջ դիր ինձ , և ես բայա-  
տրեմքեզի ինչ իմանալու է այս ազա-  
տութիւն մտաց ըսածնին , որովքու  
խռոված միտքդ ալ հանդարտի , ու իմա-  
նաս որ այն ալ Մտուծոյ մէկ պարգևն  
է մարդուս , զորն որ թէ ըստ պատշաճի  
բանեցընեն , շատ թշուառութիւններէ  
կազատին , ու շատ բարիքներ կը պատ-  
րաստեն իրենց ալ ուրիշներուն ալ : Մյս  
ուղիդ ազատութեան մտաց ինչ ըլլալը  
երբ հասկընաս , ինք իրեն կ'իմանաս  
երկու ծայրերուն գէշութիւններն ալ :

( ՄՆԱՅԱՆՆ ՈՒՐԻՇ ԱՅԿԱՄ )

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ . Տան մը հարկատր նիւթերը գնելու վրայ :

ՏԱՆ մը մէջ ամէն բան ինքնիրմէն  
չբուսնիր , հապա պէտք է գրեթէ ա-  
մէն բան դրսէն գնել . բայց աս գնելու  
մէջ ալ քանի մը բան կայ դիտելու ու  
միտք առնելու : Մշաջին՝ ան բանն որ  
տանը մէջ միշտ հարկաւոր կ'ըլլայ՝ շա-  
տը մէկտեղ կամ տանը տարեկան պա-  
շարը մէկէն գնուի . վասն զի հարկաւոր  
բանը քիչ քիչ գնելով՝ տարին հարիւ-  
րին քսանըհինկ կորուստ կ'ըլլայ , որն  
որ քիչ բան ըսել չէ . վասն զի եթէ ա-  
մէն նիւթի վրայ ալ նոյն հաշիւը ընես ,  
կը տեսնես որ շատը մէկէն առնելովդ  
տարին ըրած ծախքիդ չորրորդ մասը  
կը պակսի , որ ըսել է չորս տարուան  
մէջ մէկ տարուան ծախքդ կը շահիս :  
Երաւ որ մանր մունր բաներու մէջ որ  
փնտրուես աս ճշգրութիւնը՝ զգուելի ա-  
գահութիւն մը կը սեպուի . բայց թէ  
որ շատ նիւթի մէջ ըրած պզտի կու-  
րուստներդ մտածես՝ կը տեսնես որ տա-  
րեգլխին այն աստիճան գումար մը կ'ըլ-  
լայ , որուն կորուստը չմտածելը չէ թէ  
միայն ագահութիւն չէ , այլ նաև բանը  
գործը չգիտցող ու յիմարի գործ է .  
զոր օրինակ ենթադրենք թէ տարեկան

ծախքդ ըլլայ 8,000 դահեկան , ըսած  
կանոնիս որ հետեւիս ծախքդ 6,000՝  
կ'իջնայ և 2,000+ քովդ կը մնայ , որ  
կրնաս հազարութեկ բանի գործածել ,  
տանդ նորոգութիւն մը ընել , սենեակ  
մը զարդարել , ընտանեացդ ու բարե-  
կամաց ուրախութիւն մը ընել տալ . ու  
ևս առաւել Երայութեան գանձարանի  
կամ որ և իցէ շահաւոր տեղ մը դնե-  
լով՝ պզտի եկամուտ մը աւելցընել . կամ  
թէ աւելի արդիւնաւոր կերպով ազգիդ  
բարիք մը ընել , սղու մը դաստիարա-  
կութեան թոշակը տալով , կամ ազ-  
գային ընկերութեան մը օգնելով , աղ-  
քատ աղջկան մը օժիտ տալով , և այլն :  
Երկրորդ գիտելիքը ամէն բան իր  
ժամանակին առնելն է . վասն զի ասան-  
կով գնած բանդ թէ աղէկ կ'ըլլայ և  
թէ աժան . փայտն ու ածուխը մեծ  
բանի տեղ չդրուիր , բայց թէ որ ժա-  
մանակդ անցընես ու աշնան թաց օդե-  
րուն փայտ ուղես գնել , մէյմը կշեռքին  
կամ չափին մէջ կը խաբուիս , վասն զի  
փայտը թաց ըլլալով թէ կշեռքը ծանր  
կու գայ և թէ քանակը մեծցած . բայց  
ըսենք թէ աս քիչ փնաս է , հապա  
այդ թաց փայտը ո՞վ կրնայ գործածել .  
վառողին աչքը մուխէն կը կուրնայ ,  
տունդ տեղդ ծուխով կը լեցուի , ժա-  
մանակի կորուստը մէկ դիէն , տուած  
տաքութիւնը ոչինչ , առ ժամանակ մը  
չօրնալով ալ մէկէն կը մաշի : Երջն բա-  
նը ըսելու է ձէթի համար ալ՝ որ ջրի  
մասունքը մէջը շատ ըլլալուն քան զգուտ  
ձէթը ծանր կը կշուէ , ձմեռ ատեն շու-  
տով կը սառի ու վառելու ատեն անդա-  
դար կը չթուտայ ու աղօտ լոյս մը կու  
տայ : Երամանակին առնելուն մեծ օ-  
գուտն ալ աս է՝ որ ուրիշներուն փոր-  
ձածէն ալ կրնաս օգտուիլ , որովհետեւ  
անոնք քեզմէ առաջ նոյն վաճառակա-  
նէն ու նոյն խանութէն ան բանը գնած  
ըլլալով՝ կրնան վկայել թէ արդեօք  
ծախած ապրանքը աղէկ է թէ չէ , կամ  
ուրիշի քով աւելի լաւը կը գտուի եղեր :  
Երարձեալ ժամանակին մի և նոյն ապ-  
րանքէն շատերը ծախելուն , ամէնքը կը  
ջանան որ մէկմէկէ քիչ մը վար գնով

ծախեն ու պատրաստ ստակ ունենան յետագայ ապրանքներու համար . իսկ ժամանակը անցած որ փնտռես՝ ծախողները քիչ ըլլալով՝ ունեցողներն ալ իրենց գինէն վար չեն իջնար , գիտնալով որ դուն շատ տեղ փնտրուելէդ ու չգտնալէդ ետեւ՝ նորէն իրենց պիտի դառնաս , և պիտի ստիպուիս իրենց ուզած գնովը աղէկ կամ գէշ ապրանքը գնել :

Երրորդ , մասնաւոր խանութի կամ աս ան վաճառականին մի կապուիր , անանկ որ ամէն անգամ նոյն բանը նոյն խանութէն առնելու ստիպուիս . վասն զի աս բանս ալ իր բանը գործը դիտող մարդուն մեծ վնաս է : Իրաւ որ շատերը կարծեն թէ մի և նոյն խանութի յաճախորդ՝ ըլլալը օգտակար բան է , մէյմը որ բարեկամութեամբ աղէկ ու աժան ապրանք կրնան ունենալ , երկրորդ՝ կը տեսնեն որ գրեթէ միշտ կտոր մը բան ալ յաւելուած ու ձրի՝ կ'առնեն , երրորդ՝ տարեգլխի հաշուին մէջն ալ վաճառականը իր յաճախորդին հաշուէն հարիւրին ինչուան տաս տասնըհինգ վար կը զարնէ : Իրաւ կ'ըսեմ աս բաներս շատին աչքը կը կուրցընեն . վասն զի նախ խանութպանի մը բարեկամութիւնը ոչ երբէք իր շահասիրութիւնը մոռցընել կուտայ իրեն , և թէպէտ բարեկամութեան համար գէշ բանն ալ աղէկի տեղ չկլլեցընէ , որ քիչ անգամ կը պատահի , բայց ոչ երբէք քան զարդար գինը և իրեն շահը պակաս կրնայ պահանջել քեզմէ , ապա թէ ոչ հարկ կ'ըլլար քիչ ատենէն քու դուռդ գալ ու ողորմութի մուրալ . հապա առուտուրի մէջ միշտ ճշմարիտ է այլազգին ըսածը՝ « Տօսութլուգ գանթար ըլա , այլըվէրիշ մնգալ ըլա » : Եոյն բանը կը հաստատեն ետքի բերած երկու առարկութիւններդ ալ . մի թէ կրնայ ըլլալ որ խանութպանը քեզմէ հարիւրին քառասուն չվաստը կած՝ քսանը վար զարնէ հաշուէդ ու քեզի շնորհէ . և ապահով եղիր որ ինքը այնչափ վաստըկած է քեզմէ՝ որ բաց ՚ի հարիւրին քսանով քու միամտու-

թիւնդ շահեղէն զատ՝ որ միշտ դարձեալ իրեն երթաս գնելու , հարիւրին քսան շահն ալ միշտ իրեն կը մնայ քեզի ցրցուցած առատաձեռնութիւններէն զատ : — Իսկ խանութը ստէպ փոխելը աս կասկածները մանաւանդ թէ վնասները չունենալէն զատ՝ օգուտ ալ ունի , վասն զի ընդհանրապէս խանութպանը առջի անգամներուն կը ջանայ իր գնողը գոհ ընելու թէ ապրանքին աղէկութեամբը և թէ գնոյն չափաւորութեամբը , ինչուան որ մէյմը զքեզ իրեն ձգէ . նմանապէս ուրիշներն ալ տեսնելով որ դուն աս ան խանութին կապուած չես՝ կը ջանան մէկմէկէ աւելի զքեզ գոհ ընելու , ասով փոխանակ դուն անոնց շահասիրութեանը խաղ ըլլալով՝ անոնց միամտութեանը վրայ կը խնտաս , ու քիչ ատենէն կ'իմանաս որ շատ ճշմարիտ է եղեր ռամկին առակը որ կ'ըսէ . « Եր աւելը լաւ կ'աւլէ , իսկ հնցածը մաքրելու տեղ կ'աղտոտէ » :

Չորրորդ դիտելու բանն ալ աս է , որ ըստ կարի նախնական խանութներէն ու առջի ձեռքի վաճառականներէն առնես գնելու ապրանքդ . ասով ալ աւելի ընտիրը և աժան կրնաս առնել . ընտիրը կ'ըսեմ , վասն զի շատ անգամ երկրորդ ձեռքի վաճառականները ու մանրավաճառները շահ ընելու մտքով՝ անշահ ու երեսի վրայ մնացած ապրանքը կը գնեն գլխաւոր վաճառականէն , և ունեցածնին ալ քիչ բան ըլլալով՝ աղէկի ընտրութիւն չես կրնար ընել . զոր օրինակ ըսենք թէ գնելիքդ շաքար կամ խահիվէ է . գլխաւոր վաճառականին քով ամէն տեսակէն ըլլալուն և առատ գտուելուն՝ կրնաս ուզածդ առնել . իսկ մանրավաճառը շատ շատ մէկ երկու տեսակն ունենալով՝ պէտք կ'ըլլայ որ չսիրած ապրանքն ալ առնես . և գոհ եղիր եթէ գնածդ մեծ խանութներուն աւուրքը չէ . սուղ ալ կ'ըլլայ ըսի , վասն զի ապրանք մը ձեռքէ ձեռք անցնելով՝ բնական է որ երկրորդական ծախքերն ալ աւելնայ , ինչպէս նաւակի , բեռնակրի ծախքը , խանութի վարձքը և այլն , անով ապրանքն ալ աւելի կը սղնայ .

1 ՏՃ . Մի-շքերի :      2 ՏՃ . Ճապա :

մանրավաճառն ալ չկրնար քեզի իրեն ընկած գնովը ծախել, հապա պէտք է որ արդար շահ ընելու համար ալ քան զմեծ վաճառականը քանի մը ստակ աւելի ծախէ: Ըսոր յայտնի օրինակն ալ առջևնիս է. վասն զի կը տեսնենք որ խեղճ մարդուն մէկը պզտի խանութ մը կը բանայ ու կը սկսի մանրավաճառութիւն ընել, ու իրեն մանր մունր շահերովը տունը տեղը կը պահէ. նաև քիչ ատենէն խանութին հետ տանը դուռն ալ կը մեծցնէ ու առջի կարգի վաճառականներուն տեղը կ'անցնի: Ըրդ ինչպէս կ'ըլլայ աս բանս. բայց առջի ձեռքի վաճառականէն առած աժան բանը՝ քիչ մը սուղի ծախելով:

Բայց ընդհանրապէս կարծիք մը կայ որ մեծ ու հարուստ վաճառականէ ու զարդարուն խանութէ բան գնողը՝ կըրկին կը վճարէ: Ըս խօսքս ընդհանրապէս իրաւ է, բայց մեր առջի խօսքէն պէտք է որոշել. մենք գլխաւոր վաճառական որ կ'ըսենք՝ չենք իմանար ան խանութները որ քաղքին ամենէն հարուստ թաղերը շինուած են, և ընդհանրապէս ազնուականներու ու հարուստներու կը ծառայեն, մանաւանդ նորելուքի ու զարդարանքի խանութները. վասն զի իրաւ ասոնք չէ թէ միայն ապրանքին գինը կը հանեն գնողէն, այլ նաև խանութին կարգէ դուրս շուայլութեան ծախքը և մէջը եղած բազմաթիւ անձանց վարձքը, որոնք բոլորը մէկէն խանութի մը պատիւը կ'ըսուին. հարուստ յաճախորդներու համար ան աւելորդ ծախքն ալ մեծ բան չտեսնուիր, որովհետև քիչ շատ մեր մէջն ալ մտած է ան ծանծաղամտութիւնը՝ որ սուղ խանութէ բան գնելը փառք մը սեպուի: Իսկ ընդհակառակն մեր առջի ձեռքի վաճառական ըսուածները՝ շատ անգամ ան վերը ըսածներնսու ճոխութիւնը չունին, բայց ապրանքի առատութեան ու աժնութեան կողմանէ անոնցմէ շատ լաւ են, ինչպէս որ շատերնիս ալ ամէն օր փորձով կը տեսնենք, և երկայն խօսքերու կարօտութիւն չունինք:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եսք կամ Եգնաճի<sup>1</sup>:

Օ ԱՆԱԶԱՆ կլիմայից կենդանեաց վրայ ունեցած ազդեցութեանը լաւ օրինակ մը կրնայ ըլլալ Եսք ըսուած կենդանին. ասիկայ Եգնա բազմաթիւ տեսակներէն մէկն է, և թէպէտ ներքին կազմութիւնը մեր հասարակ եզներուն շատ նման է, բայց արտաքին երևոյթը շատ փոխուած է: Բոլոր մարմինը երկայն ու խիտ մազով մը ծածկուած է, որ ձիու բաշ կը նմանի. որով կենդանւոյն ձևը որոշ չէս կրնար իմանալ, հապա բոլոր վերէն վար մազի ծածկոց մը կը տեսնես. անանկ որ հազիւ թէ սրունքն ու ոտուրները դրսուանց կ'երևան: Ըս բաշը իրեն երկայնութեամբը ամենեւին չգանգրիւր, հապա շիտակ վար կախուած է, և այնպէս բարակ ու ազնիւ՝ որ աւելի մետաքսի թել կը նմանի քան թէ բուրդ: Բայց ափսոս որ կունրկին վրայ աս միակերպութեան գեղեցկութիւնը կը կորսուի. վասն զի կենդանին հոն տեղուանքը ուղտի պէս բնական կուզ մը ունենալով, վրան բուսած մազերն ալ խառնափրնդոր ասդիս անդին ցրուած կ'երևան, որով համեմատութիւնն ալ շատ լաւ չպահուիր: Եսքին ինչպէս մորթը՝ ասանկ ալ պոչը եղան պէս լերկ ու տգեղ չէ, հապա ամենեւին ձիու պոչին կը նմանի, որով ինչպէս ձին՝ ասանկ ալ ետքը մասնաւոր գեղեցկութիւն ու առանձին զարդ մը կը ստանայ. իսկ մազերը ձիուն մազերէն աւելի երկայն են, ու ինչպէս որ ըսինք մետաքսի պէս նուրբ, փայլուն ու փափուկ են: Ըհա այսպէս թէպէտ աս կենդանւոյն կազմուածքը եզի, բուրդը մերինսոսի, կուզը ուղտի

<sup>1</sup> Գղ. Yack, Boeuf à queue de cheval. 1<sup>er</sup>. Bos congruens.